ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՊԱՐՈՆ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Մարության.

Ի լրումն 13.02.2019թ. իմ դիմումի, տեղեկացնում եմ, որ ս.թ. փետրվարի 26-ին ժ.18.00-20.00 Ազատության հրապարակում տեղի կունենա հավաք, որից հետո՝ ժ.20.00-21.00 կանցկացվի ջահերով երթ՝ Ազատության հրապարակ-Մաշտոցի պողոտա-Հաղթանակի կամուրջ-Իսակովի պողոտա-Մեբաստիա փողոց-Եռաբլուր պանթեոն երթուղով, երթի ավարտից հետո՝ ժ.21.00-21.20 Եռաբլուր պանթեոնի տարածքում կկայանա հավաք:

Կարգադրիչների թիվը՝ 30:

«Հայոց ազգային գվարդիա»
հասարակական նախաձեռնող
խմբի ղեկավար **Տ. Չոբանյան**

14.02.2019թ.

Երևանի քաղաքապետ
պ-ն Հայկ Մարությանին

Հարգելի պարոն Մարության,

Ղեկավարվելով «Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի պահանջներով, իրազեկում ենք Ձեզ, որ Սումգայիթյան ջարդերի զոհերի հիշատակի օրվան ընդառաջ՝ ս.թ. փետրվարի 26-ին «Հայոց ազգային գվարդիա» նախաձեռնող կառույցը նախատեսում է Ազատության հրապարակում, ժամը 18.00-ին իրականացնել 1,5-2 ժամ տևողությամբ հավաք, որին ակնկալվում է մոտ 5.000 մարդու մասնակցություն:

Հավաքից հետո, մոտավորապես ժամը 19.30-20.00-ին, նախատեսվում է քայլերթ Ազատության հրապարակից դեպի Ծիծեռնակաբերդի բարձունքում գտնվող Սումգայիթյան ջարդերի զոհերին նվիրված հուշարձան:

Քայլերթից հետո, մոտավորապես ժամը 20.30-21.00, նախատեսվում է ջահերով քայլերթ Ծիծեռնակաբերդի բարձունքից դեպի Եռաբլուր, որտեղ պլանավորվում է իրականացնել մոտ 15 րոպե տևողությամբ հավաք:

Հավաքների, քայլերթի, ջահերով քայլերթի նպատակն է վկայակոչել Սումգայիթյան ջարդերի զոհերին, հարգանքի տուրք մատուցել նրանց հիշատակին, դատապարտել Ադրբեջանի հայատյաց քաղաքականությունը, անվերապահ աջակցություն ցուցաբերել արցախահայությանը, հայտնել Արցախյան հիմնախնդրի կարգավորման վերաբերյալ կազմակերպության դիրքորոշումը, հարգել ազատամարտիկների հիշատակը:

Նշված հանրային միջոցառումների ժամանակ օգտագործվելու են ՀՀ և Արցախի դրոշներ, պաստառներ, բարձրախոսներ և ջահեր:

Կից ներկայացվում է «Հայոց ազգային գվարդիա» ՆԿ ղեկավար մարմնի որոշումը վերոգրյալ հանրային միջոցառումներն իրականացնելու վերաբերյալ:

Առդիր՝ 1 էջ:

Հարգանքով՝
«Հայոց ազգային գվարդիա» ՆԿ
խորհրդի նախագահ՝ Տիգրան Չորանյան
հեռ.՝ 091-40-39-71

147 1568

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
№ 988 « 13 » 02 2019 թ.